# Vantage Plus Digital

## Օֆտալմոսկոպ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ




Keeler

– A world without vision loss –

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....2**
**2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ....2**
2.1 ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ....2
2.2 ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ....2
**3. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԱՆԿ....2**
**4. ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ....2**
4.1 ԾՐԱԳՐԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ....3
4.2 ՄԻԱՑՐԵՔ USB ՄԱԼՈՒԽԸ....3
4.3 ՈՒՂՂԵՔ ԴԻՐՔԸ....3
4.4 ԿԱՐԳԱԲԵՐԵՔ ՏԵՍԱԽՑԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԱՑՈՒՄԸ....3
4.5 ԿԱՐԳԱԲԵՐԵՔ ԿԻԶԱԿԵՏՄԱՆ ՈՍՊՆՅԱԿԸ....3
4.6 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ....3
4.7 ՏԵՍԱԽՑԻԿԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ....3
**5. ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ և ԱՔՍԵՍՈՒԱՐՆԵՐ....4**
**6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....4**
**7. ԵՐԱՇԽԻՔ....4**

Keeler արտադրության Vantage Plus Digital-ը նախագծվել և ստեղծվել է 93/42/ԵՏՀ հրահանգի, 2017/745 կանոնակարգի (ԵՄ) և ISO 13485 Բժշկական սարքերի որակի կառավարման համակարգերի համաձայն:

Դասակարգում. ԵԽ. Դաս I

ՍԴՎ. Դաս II

Սույն ձեռնարկում պարունակվող տեղեկատվությունը չպետք է ամբողջությամբ կամ մասամբ վերարտադրվի՝ առանց արտադրողի նախնական գրավոր հաստատման: Որպես արտադրանքի շարունակական զարգացման մեր քաղաքականության մաս, միայն մեզ՝ արտադրողին է իրավունք վերապահվում փոփոխություններ կատարել տեխնիկական պայմանների և այս փաստաթղթում պարունակվող այլ տեղեկատվության մեջ՝ առանց նախնական ծանուցման:

Սույն ՕՀ-ն հասանելի է նաև Keeler UK և Keeler USA կայքերում:

Հեղինակային իրավունք՝ © Keeler ՍՊԸ 2021թ:. Հրապարակված է Մեծ Բրիտանիայում՝ 2021 թ.-ին:

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Keeler Vantage Plus Digital-ը անուղղակի օֆտալմոսկոպ է, որը նկարում է նկարներն այնպես, ինչպես տեսնում է օգտագործողը՝ հիմնականում ուսուցողական նպատակներով:

**Keeler-ը խորհուրդ չի տալիս թվային տվյալների օգտագործումը ախտորոշման նպատակների համար:**

## 2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Խնդրում ենք հաշվի առնել, որ մեր սարքերի պատշաճ և անվտանգ աշխատանքը երաշխավորվում է միայն այն դեպքում, երբ սարքերն ու դրանց լրացուցիչ մասերը/աքսեսուարները ձեռք են բերվում բացառապես Keeler ՍՊԸ-ից: Այլ պարագաների օգտագործումը կարող է առաջացնել սարքի բարձր էլեկտրամագնիսական արտանետումներ կամ ցածր էլեկտրամագնիսական դիմադրողականություն և հանգեցնել դրա սխալ աշխատանքի:

Սարքի անվտանգ գործարկումն ապահովելու համար ծանոթացեք հետևյալ ցուցումների հետ:

- Չփոփոխեք սարքի կառուցվածքը:
- Տեսախցիկը պետք է կապակցված լինի ԱՅ-ին, որը կհամապատասխանի էլեկտրական սարքերի անվտանգության (բժշկական) EN/IEC 60601-1 ստանդարտին:

- ՆՇՈՒՄ՝ Օգտագործման հրահանգների այս փաստաթղթին հարկավոր է ծանոթանալ Vantage Plus-ի և Vantage Plus LED-ի անուղղակի օֆտալմոսկոպների համար նախատեսված օգտագործման հրահանգների փաստաթղթի (մասի համար EP59-19017) հետ միասին:

### 2.2 ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչ BIO-ն՝ գլխին ամրացվող սարքի միջոցով կարող է իրականացվել չլայնացրած բիբի միջոցով, տեսադաշտը և խոշորացումը կարող են զգալիորեն վնասվել. ուստի, գործնականում խորհուրդ է տրվում կիրառել բիբի լայնացում միդրիատիկի միջոցով: Օպտիկայի մասնագետներն աչքի առողջական վիճակի համապարփակ հետազոտության շրջանակներում պարբերաբար կատարում են բիբի լայնացում՝ աչքի հատակը համապարփակ ուսումնասիրելու համար՝ կլինիկական ցուցումների առկայության դեպքում: Բացի այդ, ցանցաթաղանթի ավելի ծայրամասային պատկերը ստանալու համար, գլխին ամրացվող սարքն օգտագործելիս կատարվում է սկլերայի սեղմում, որպես BIO-ի հավելում:

## 3. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԱՆԿ

- Vantage Plus բինակուլյար անուղղակի օֆտալմոսկոպ
- Vantage Plus-ի հրահանգներ
- Ծրագրակազմի սարքավար և հավելված
- USB մալուխ (5 մ)

## 4. ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

Տեղակայեք Vantage Plus Digital-ը, ինչպես սովորական ձևով կտեղակայեիք ձեր անուղղակի սարքը: Սարքը պետք է տեղակայվի նախքան հետազոտության պրոցեդուրաները սկսելը:

## 4.1 ԾՐԱԳՐԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Անդրադարձեք Ծրագրակազմի տեղակայման և սկսնակի համառոտ ուղեցույցին - EP59-09871:

## 4.2 ՄԻԱՑՐԵՔ USB ՄԱԼՈՒԽԸ

Ծրագրակազմը տեղադրելուց հետո միացրեք մալուխը մինի USB միացքին:

Միացրեք USB մալուխը ձեր համակարգչին



USB միացքին միացնող մալուխը

## 4.3 ՈՒՂՂԵՔ ԴԻՐՔԸ

Տեղադրեք ձեր գլխին և հարմարացրեք, ինչպես սովորական հետազոտության ժամանակ:

## 4.4 ԿԱՐԳԱԲԵՐԵՔ ՏԵՍԱԽՑԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԱՑՈՒՄԸ

Պտտեք պտտիչը և կարգաբերեք տեսախցիկի ժամանակավոր միացումը էկրանին:



Չափազանց բարձր էկրանին



Չափազանց ցածր էկրանին



Կենտրոնաբերված էկրանին



## 4.5 ԿԱՐԳԱԲԵՐԵՔ ԿԻԶԱԿԵՏՄԱՆ ՈՍՊՆՅԱԿԸ

Պտտեք կիզակետման կարգաբերման լծակը և կարգաբերեք ոսպնյակի կիզակետումը:



## 4.6 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային հեռավորությունը փոփոխվում է 300-600 մմ՝ հիվանդի աչքի առջևի մասից մինչև 20D ոսպնյակով գործիքի առջևի մասը:



Ցանցաթաղանթի պատկերը կիզակետից դուրս



Ցանցաթաղանթի պատկերը կիզակետի մեջ

Եթե էկրանի վրայի նկարը կիզակետից դուրս է, դուք պետք է օպտիկան տեղաշարժեք առաջ և/կամ հետ, մինչև այն կիզակետման մեջ լինի:

## 4.7 ՏԵՍԱԽՑԻԿԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ

Տեսախցիկն անջատելու համար հանեք USB մալուխը:

## 5. ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ և ԱՔՍԵՍՈՒԱՐՆԵՐ

| Տարր | Մասի համար |
|---|---|
| Vantage Plus Digital-ի ռտնակավոր անջատիչ | 1205-P-7001 |
| Բինոկուլյար անուղղակի դեմքի պաշտպանիչ վահանակ | 1205-P-7034 |
| Volk 20D սև խտացնող ոսպնյակ | 2105-K-1159 |
| Vantage Plus Digital-ի տեղափոխման պատյան | EP79-43643 / EP19-43108 |

## 6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հին էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների ուտիլիզացում**

Ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա նշված այս խորհրդանիշը և հրահանգները ցույց են տալիս, որ այս ապրանքը չպետք է դիտարկվի որպես կենցաղային թափոն:

Խրախուսվում է, որպեսզի այս սարքավորումներն իրենց ծառայելու ժամկետի ավարտին վերամշակվեն և վերաօգտագործվեն՝ հետապնդելով շրջակա միջավայրի վրա ԷԷՍԹ-ի (Էլեկտրական էլեկտրոնային սարքավորումների թափոններ)ազդեցության և աղբավայրեր մտնող ԷԷՍԹ ծավալի նվազեցման նպատակը:

**Եթե ձեզ ավելի շատ տեղեկատվություն է անհրաժեշտ հավաքածուի վերաօգտագործման և վերամշակման վերաբերյալ, ապա կապվեք B2B համապատասխանության հետ՝ 01691 676124 (+44 1691 676124) հեռախոսահամարով: (Միայն Մեծ Բրիտանիայում):**

**Սարքի հետ կապված ցանկացած լուրջ միջադեպ պետք է հաղորդվի արտադրողին և ձեր անդամ պետության իրավասու մարմնին:**

## 7. ԵՐԱՇԽԻՔ

Keeler արտադրության Vantage Plus Digital-ին տրամադրվում է երեք տարվա երաշխիք՝ թերի արտադրական մասերի կամ գործարանային կոմպլեկտավորման համար: Երաշխիքը կատարվում է դեպի բազա վերադարձի հիմունքներով (ԲՎՀ)՝ հաճախորդի հաշվին, և կարող է անվավեր դառնալ, եթե ճեղքային լամպը պարբերաբար չի սպասարկվել:

Արտադրողի երաշխիքն ու պայմանները մանրամասն ներկայացված են Keeler UK կայքում:

Հայելին, հիմնական լուսավորության լամպն ու ընդհանուր «մաշվածությունը» բացառվում են մեր ստանդարտ երաշխիքից:

**Արտադրողը մերժում է ցանկացած պատասխանատվություն և երաշխիքային պարտավորություններ, եթե սարքը որևէ ձևով խափանվում է կամ պարբերական սպասարկումը բաց է թողնվում կամ կատարվում է այնպես, որ չի համապատասխանում արտադրողի այս հրահանգներին:**

**Այս սարքում օգտագործողի կողմից սպասարկվող մասեր չկան: Ցանկացած սպասարկում կամ վերանորոգում պետք է իրականացվի միայն Keeler ՍՊԸ-ի կամ պատշաճ կերպով վերապատրաստված և լիազորված դիստրիբյուտորների կողմից: Սպասարկման ձեռնարկները հասանելի կլինեն Keeler- ի լիազորված սպասարկման կենտրոնների և Keeler- ի կողմից վերապատրաստված սպասարկող անձնակազմի համար:**

## Կոնտակտային տվյալներ

### Արտադրող

Keeler Լիմիթիդ
Քլեվեր Հիլ Ռոուդ
Ուինդզոր
Բերքշիր
SL4 4AA Մեծ Բրիտանիա
**Անվճար հեռախոսահամար՝** 0800 521251
**Հեռ.՝** +44 (0) 1753 857177
**Ֆաքս՝** +44 (0) 1753 827145

### ԱՄՆ վաճառքի գրասենյակ

Keeler ԱՄՆ
Ֆենիքսվիլ Փայկ, 3222
Շենք թիվ 50
Մալվերն, ՊԱ 19355 ԱՄՆ
**Անվճար հեռախոսահամար՝** 1 800 523 5620
**Հեռ.՝** 1 610 353 4350
**Ֆաքս՝** 1 610 353 7814

### Չինաստանի գրասենյակ

Հայմա Չայնա Գրուպ
名称：沃迈（上海）机电有限公司
地址：上海市闵行区金都路1165弄
123号23幢一号厂房三层B座
电话：021-6151 9025

### Հնդկաստանի գրասենյակ

Keeler Հնդկաստան
Հալմա Ինդիա Պվտ. Ltd./ՍՊԸ
Հողամաս՝ A0147, ճանապարհ՝ 24
Վեյջլ արտադրական կոմպլեքս
Թեյն Ուեսթ - 400604, Մահարաշտրա
ՀՆԴԿԱՍՏԱՆ
**Հեռ.՝** +91 22 4124 8001

EC REP

Վիզիոմետրիկս, Ս. Լ., Վինյալս, 131
08221 Տերրասսա, Իսպանիա

EP59-09863 – թողարկում Ը Թողարկման ամսաթիվ՝ 12/05/2021

CE

Keeler
– A world without vision loss –